

ԴԵՐՔԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ Ամայրա ՎԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ շարահյուսություն, անկախ դերբայ, բառակապակցություն, դերբայական դարձված, հարադիր բայ, շարադասություն, նախադասություն, բույժ, ստորակետ, կողմնակի անդամ:

Ключевые слова: синтаксис, деепричастие, словосочетание, деепричастный оборот, глагол, порядок слов, предложение, запятая, тире, второстепенные члены.

Key words: syntax, participle, word combination, participial phrase, verb, word order, sentence, comma, dash, secondary parts.

А. Ванян

Обучение причастному обороту в основной школе (базовой)

Обучение деепричастному обороту имеет теоретическую и практическую значимость. В процессе обучения данной теме необходимо обратить внимание на некоторые проблемы – разграничение личных и неличных форм глагола, взаимоотношение деепричастного оборота и сложного глагола, способы выражения главного члена деепричастного оборота, синтаксические функции деепричастного оборота и правила пунктуации деепричастного оборота.

A.Vanyan

Teaching Participle Phrase in Secondary School

Teaching participle phrase has theoretical and practical significance. In the process of teaching this topic it is necessary to pay attention to a number of problems – differentiation of finite and nonfinite verbs, interrelation between participle phrase and complex verbs, means of expression of principal member of the participle phrase, syntactical function of participle phrase and punctuation rules of participle phrase.

Դերբայական դարձվածի ուսուցումը տեսական և գործնական նշանակություն ունի: Թեմայի ուսուցման գործընթացում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի շարք հիմնական դերբայների՝ դիմավոր և անդամ բայերի տարբերակմանը, դերբայական դարձված և հարադիր բայ հասկացությունների առնչությանը, դերբայական դարձվածի գերադաս անդամի արտահայտությանը, դերբայական դարձվածի շարահյուսական գործառությանը և կետադրությանը:

Շարահյուսության ուսումնասիրության առարկաներից մեկը բառակապակցությունն է, ուրեմն և բայական բառակապակցությունը: Դերբայական դարձվածի՝ որպես բայական բառակապակցության ուսուցումը տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի: Թեման, խոստովանենք, աշակերտների կողմից հեշտ ընկալվողներից չէ: Սակայն ճիշտ և նպատակասլաց աշխատելու դեպքում կարելի է հասնել հաջողությունների:

Նախքան դերբայական դարձվածի հիմնավոր ուսումնասիրությունը աշակերտները առնչվում են դրան: 7-րդ դասարանում՝ «Անկախ դերբայներ» թեման ուսուցանելիս¹, աշակերտներին նախնական գիտելիքներ են տրվում, տրված դերբայներով բառակապակցություններ, նախադասություններ, փոքր տեքստեր են կազմվում:

Նախնական շրջանում կարևոր է «դարձված» և «դարձվածք» հասկացությունների տարբերակումը: Անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը հրավիրել այն հարցին, որ դարձվածքը պարտադիր ունենում է փոխաբերական իմաստ ունեցող բառ-բաղադրիչ և կարող է կազմվել նաև առանց բայի մասնակցության, և որ դարձվածքը իր իմաստով համարժեք է բառին ու շարահյուսորեն չի վերլուծվում: Մինչդեռ դերբայական դարձվածքը անկախ դերբայներից որևէ մեկի ծավալումն է առնվազն մեկ լրացումով:

8-րդ դասարանում, երբ ուսուցանվում են նախադասության անդամները, աշակերտները նկատում են, որ դրանք կարող են արտահայտվել և՛ բառով, և՛ բառակապակցությամբ, և՛ ստորադաս նախա-

¹Տե՛ս Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու, 7-րդ դասարան, Եր., էջ 87-92, 2011:

դասությամբ¹: Բերվող օրինակների մեջ լինում են նաև նախադասության՝ դերբայական դարձվածով արտահայտված անդամներ:

Դերբայական դարձվածի խոր և համակողմանի ուսուցանումից հետո միայն աշակերտները կարողանում են ամբողջությամբ յուրացնել նյութը, ըմբռնել դերբայական դարձվածի քերականական և ռճական առանձնահատկությունները:

2013-2014 ուստարվանից «Դերբայական դարձված» թեման ուսուցանվում է 9-րդ դասարանում²: Թեմային հատկացվում է հինգ դասաժամ:

Առաջին դասին անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին. ի՞նչ է բայը, որո՞նք են բայի ձևաբանական առանձնահատկությունները, ինչո՞վ են տարբերվում դիմավոր և անդեմ բայերը, քերականական ո՞ր հատկանիշն է ընդհանուր դիմավոր և անդեմ բայերի համար, շարահյուսական ի՞նչ պաշտոններ է կատարում բայը, անվանի հայագետներից ո՞վ է կատարել ժամանակակից հայերենի բայի քերականական հատկանիշների, բայաձևերի կազմության, բայասեռին առնչվող հարցերի հիմնավոր քննությունը:

Շատ կարևոր է աշակերտների կողմից անդեմ բայի դրսևորման երկու տարբեր ձևերի տարբերակումը, քանի որ դերբայական դարձված կազմվում է միայն անկախ դերբայներով: Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտները տրված անկախ դերբայներով պետք է կազմեն դերբայական դարձվածներ, ապա դրանք գործածեն նախադասությունների մեջ:

Լեզվական յուրաքանչյուր միավոր ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նրա և նրան առնչվող լեզվական մյուս միավորների տարբերակման հարցին: Ուստի շատ կարևոր է կանգ առնել «դերբայական դարձված» և «հարադիր բայ» հասկացությունների տարբերակման վրա: Աշակերտները պետք է իմանան, որ հարադիր բայի կազմում կարող են լինել բառային ինքնուրույնությունից զուրկ բաղադրիչներ (օրինակ՝ անց կենալ, պոկ գալ, եռ գալ և այլն) և, որ ամենակարևորն է, հարադիր բայը իմաստով համապատասխանում է մեկ բառի և սովորաբար ունենում է իր համարժեքը (օրինակ՝ թույլ տալ//թույլատրել, միտք անել// մտածել, լաց լինել//լացել և այլն): Մինչդեռ դերբայական դարձվածը կառուցվածքով բառակապակցություն է, որի բաղադրիչների միջև առկա է ստորադասական հարաբերություն:

Աշակերտները, ուսուցչի օժանդակությամբ հանձնարարված տեքստից դուրս գրելով դերբայական դարձվածները, կատարում են եզրահանգում. դերբայն իր լրացումներով կազմում է դերբայական դարձված:

Հաջորդ դասաժամին գիտելիքների ամրակայման նպատակով պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դերբայական դարձվածի գերադաս անդամը՝ անկախ դերբայը, կարող է հանդես գալ թե՛ ուղիղ, թե՛ թեք ձևերով: Անորոշ, հարակատար, ենթակայական դերբայները դերբայական դարձվածի կազմում կարող են հանդես գալ և՛ ուղիղ, և՛ թեք ձևերով, իսկ համակատարը՝ միայն ուղիղ ձևով: Աշակերտները բերում են համապատասխան օրինակներ, ինչպես նաև տրված տեքստերից առանձնացնում են դերբայական դարձվածները՝ հատկապես ուշադրություն դարձնելով թեք ձևերով արտահայտված գերադաս անդամ ունեցողներին:

Դերբայական դարձվածի ուսուցման հաջորդ քայլը կապված է նրա շարահյուսական գործառույթի հետ: Աշակերտները պետք է իմանան, որ դերբայական դարձվածը կարող է կատարել շարահյուսական բոլոր գործառույթները, բացի պարզ ստորոգյալից:

Դերբայական դարձվածի շարահյուսական դերը որոշելիս աշակերտը պետք է ուշադրություն դարձնի գերադաս անդամ դերբային և հարցն ուղղի նրան, քանի որ դերբայական դարձվածի շարահյուսական դերը պայմանավորված է դերբայով:

Տեղին ենք համարում անդրադառնալ հետևյալ հակասությանը. ծրագիրը պահանջում է աշակերտներին սովորեցնել, որ դերբայական դարձվածը նախադասության մեկ անդամի դեր է կատարում, մինչդեռ պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարաններում դերբայական դարձվածի կազմում հանդես եկող բառերը վերլուծվում են առանձին:

¹ Տե՛ս Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու, 8-րդ դասարան, Եր., էջ 78-126, 2012:

² Տե՛ս Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու, 9-րդ դասարան, Եր., էջ 19-27, 2013:

Թեմայի վերաբերյալ աշակերտների գիտելիքները ամրապնդելու համար իբրև տնային աշխատանք կարելի է հանձնարարել:

1. Կազմել դերբայական դարձվածով նախադասություններ, որոշել դերբայական դարձվածների շարահյուսական պաշտոնը:

2. Գեղարվեստական գրականությունից ընտրել դերբայական դարձվածներ պարունակող հատվածներ, որոշել դերբայական դարձվածների շարահյուսական պաշտոնը:

3. Կազմել բնագիր՝ գործածելով տրված դերբայական դարձվածները: Որոշել դերբայական դարձվածների շարահյուսական պաշտոնը:

4. Ուղղագրական տրված կանոնին վերաբերող բայերով կազմել դերբայական դարձվածներ, դրանք պահանջվող պաշտոններով գործածել նախադասությունների մեջ:

5. Տրված բայերի հոմանիշներով կազմել դերբայական դարձվածներ, դրանք տարբեր պաշտոններով գործածել պատմողական (հարցական, հրամայական, բացականչական) նախադասություններում:

Տարիներ շարունակ դպրոցական դասագրքերում խոսք չի եղել «կողմնակի անդամ» հատկացության մասին: Քանի որ 9-րդ դասարանի «Հայոց լեզու» դասագրքում (2013թ.) հեղինակները (Ն. Բարսեղյան, Փ. Մելիքիսանյան) անդրադարձել են դրան¹, 3-րդ դասաժամին թեմայի հետ կապված աշխատանքներ են կատարվում:

Աշակերտների մեծ մասը կողմնակի ենթական շփոթում է հատկացուցչի հետ՝ հատկապես սեռական հոլովով արտահայտվելու դեպքում: Աշակերտները պետք է իմանան, որ կողմնակի ենթական կարող է արտահայտվել ինչպես սեռական, այնպես էլ ուղղական հոլովով: Այն չի արտահայտում պատկանելության կամ ստացականության իմաստ և դերբայական դարձվածի՝ երկրորդական նախադասության փոխակերպման ժամանակ վերածվում է երկրորդական նախադասության ենթակայի: Ինչ վերաբերում է կողմնակի մյուս անդամների շարահյուսական պաշտոնը որոշելուն, ապա աշակերտներին պետք է բացատրել, որ դա կատարվում է նույն սկզբունքով, ինչ որ նախադասության երկրորդական անդամներին:

Բարդ ստորադասական նախադասությունը դերբայական դարձվածով պարզ նախադասության, վերջինս բարդ ստորադասական նախադասության փոխակերպելիս պետք է ամրապնդել աշակերտներին՝ նախադասության կողմնակի անդամների վերաբերյալ ունեցած գիտելիքները:

«Դերբայական դարձվածի շարադասությունը» թեմային հատկացվում է առանձին դասաժամ: Դերբայական դարձվածի շարադասությունը պայմանավորված է նրա կատարած շարահյուսական պաշտոնով: Ենթակա, հատկացուցիչ և որոշիչ դերբայական դարձվածները ուղիղ շարադասության դեպքում լինում են նախադաս, շրջուն շարադասության դեպքում՝ հետադաս: Բացահայտիչ դերբայական դարձվածները պարտադիր ունենում են հետադաս շարադասություն: Մովորաբար հետադաս շարադասություն են ունենում նաև խնդիր դերբայական դարձվածները, չնայած դրանք կարող են ունենալ նաև նախադաս գործածություն: Յուրահատուկ է պարագա դերբայական դարձվածների շարադասությունը: Քանի որ վերջիններիս շարադասությունը որոշվում է ենթակայի և ստորոգյալի նկատմամբ ունեցած դիրքով, ուրեմն նրանք կարող են լինել նախադաս, միջադաս կամ հետադաս: Նախադասությունը դերբայական դարձվածով սկսվելու կամ ավարտվելու դեպքում պարագա դերբայական դարձվածը ունենում է համապատասխանաբար նախադաս կամ հետադաս շարադասություն, միջադաս շարադասության դեպքում դերբայական դարձվածը գտնվում է ենթակայի (ու նրա լրացումների) և ստորոգյալի (ու նրա լրացումների) միջև:

«Դերբայական դարձվածի շարադասությունը» թեմային անդրադառնում ենք նաև «Բարդ նախադասություն» թեման ուսուցանելիս: Դերբայական դարձվածը ճիշտ տրոհելու կամ ընդհանրապես չտրոհելու հմտությունները զարգացնելու հնարավորություն են ընձեռում տարեվերջյան կրկնության համար հատկացված դասաժամերը:

Աշակերտները պետք է հստակ իմանան, որ ոչ բոլոր դերբայական դարձվածներն են տրոհվում:

Մովորաբար չեն տրոհվում:

¹ Տե՛ս Բարսեղյան Հ., Մելիքիսանյան Փ., Հայոց լեզու, 9-րդ դասարան, Եր., էջ 20, 2013:

ա) ենթակա, ստորոգելի, հատկացուցիչ, նախադաս որոշիչ, ուղիղ և անուղղակի խնդիր, լրացյալին կապով կամ կապակաճան բառով միացած դերբայական դարձվածները,

բ) մի շարք պարագա դերբայական դարձվածները (Անդրդիատ խոսելուց չե՞ս հոգնում: Առողջայում աշխատելիս հոգնություն չէր զգում),

գ) օժանդակ բային, էլ, ևս շաղկապներին, իսկ, անգամ, նույնիսկ, էլ սաստկական վերաբերականներին նախադրյալ դերբայական դարձվածները:

դ) նախադասության ստորոգյալն ընդմիջող դերբայական դարձվածը (Պետք է ուսուցման ժամանակակից մեթոդներ օգտագործելով բացատրենք նոր թեման)¹:

Սովորաբար տրոհվում են.

ա) անորոշ դերբայի գործիական հոլովով գերադաս անդամ ունեցող դերբայական դարձվածով ձևավորված ժամանակի, ձևի, պատճառի, հիմունքի, նրբեմն էլ զիջման և պայմանի պարագաները,

բ) անորոշ դերբայի տրական հոլովով գերադաս անդամ ունեցող նպատակի պարագա վերջադաս դերբայական դարձվածները,

գ) հարակատար դերբայով գերադաս անդամ ունեցող դերբայական դարձվածով ձևավորված ժամանակի, ձևի, պատճառի, հիմունքի, զիջման պարագաները,

դ) հիմունքի, զիջման և բացառման կապերով ձևավորված դերբայական դարձվածները,

ե) բացահայտիչ, հետադաս որոշիչ դերբայական դարձվածները²:

Աշակերտները պետք է իմանան՝ նախադաս և վերջադաս դերբայական դարձվածները տրոհվում են բույծով, միջադասը՝ ստորակետերով:

Դերբայական դարձվածի կետադրությանը հատկացված երկրորդ դասաժամին տարբեր բնույթի վարժություններով ամրապնդվում են և՛ նախադասության անդամների, և՛ տրոհվող դերբայական դարձվածի վերաբերյալ աշակերտների գիտելիքները:

Դերբայական դարձվածի կետադրությունը հիմնովին ըմբռնելու համար աշակերտները պետք է իմանան նաև հետևյալ օրինաչափությունները.

ա) Մի քանի բաղադրիչ նախադասություններից կազմված բարդ նախադասության մեջ դերբայական դարձվածները կետադրվում են ըստ առանձին նախադասությունների:

բ) Բազմակի դերբայական դարձվածները տրոհվում են իբրև մեկ ամբողջություն, եթե նույնիսկ գերադաս անդամները տարբեր դերբայներ են:

գ) Եթե վերջադաս դերբայական դարձվածին հաջորդում է **և, ու, կամ** համադասական շաղկապներով կապակցված ընդհանուր ենթակայով համադաս նախադասություն, ապա դերբայական դարձվածից հետո դրվում է ստորակետ:

դ) Բարդ նախադասության բաղադրիչները միացնող շաղկապին հաջորդող դերբայական դարձվածը կարելի է տրոհել թե՛ նախադասի, թե՛ միջադասի կանոններով:

ե) Ստորադաս նախադասությամբ վերջացող նախադաս դերբայական դարձվածը կարելի է տրոհել թե՛ դերբայական դարձվածի կանոնով՝ դնելով բույծ, թե՛ ստորադաս նախադասության կանոնով՝ դնելով ստորակետ:

Կետադրական վարժություններ կատարելիս պետք է ուշադրություն դարձնել նաև զեղչված դերբայով դերբայական դարձվածին՝ աշակերտներին բացատրելով, որ այն ունի նույն կետադրությունը, ինչ որ սովորական դերբայական դարձվածը, ինչպես նաև միայնակ դերբայի կետադրությանը, որի տրոհումը ենթադրվում է միայն երկրորդական նախադասություն լրացում ունենալու դեպքում (Աղջիկն ընկրկեց՝ հասկանալով, որ անհնար է նրան համոզելը):

Կետադրության հարցում հանդիպած դժվարությունները հաղթահարելուն օգնում են գծապատկերները: Ուսուցողական թելադրությունները, շարադրություններն ու փոխադրությունները ևս դերբայական դարձվածի կետադրությունից աշակերտների ձեռք բերած գիտելիքները ամրապնդելու միջոց են:

¹ Տե՛ս Չարայան Ն., Ավետիսյան Յու., Հայոց լեզու, էջ 87, Երևան, 2009:

² Տե՛ս Չարայան Ն., Ավետիսյան Յու., Ծարահյուսություն, էջ 88, Երևան, 2009:

Դերբայական դարձվածով պարզ ընդարձակ նախադասությունները աշակերտները երբեմն ընկալում են որպես բարդ նախադասություններ: Ուսուցիչը պետք է նրանց բացատրի, որ դերբայական դարձվածի առկայությունը չի կարող պարզ նախադասությունը բարդ դարձնել, որ դրա համար պարտադիր է ստորոգման առկայությունը:

Ուսուցչի վարպետությունից և աշակերտների բարելավիչ աշխատանքից է կախված, թե՞ վերջնական ինչ արդյունք կապահովվի թե՛ վերոհիշյալ, թե՛ մյուս թեմաներից:

Քանի ուսուցիչ, այնքան դասավանդման ձև, քանի աշակերտ, այնքան ընկալման մակարդակ:

Գրականություն

1. Աբրահամյան Ա.Գ., *Հայերենի կենտադրություն*, Երևան, 2002:
2. Աբրահամյան Ա.Գ., *Հայոց լեզու, Շարահյուսություն*, Երևան, 2004:
3. Բարսեղյան Հ., Մեյթիլսանյան Փ., *Հայոց լեզու, 9-րդ դասարան*, Երևան, 2013:
4. Բարսեղյան Հ., Մեյթիլսանյան Փ., *Հայոց լեզու, 8-րդ դասարան*, Երևան, 2012:
5. Բարսեղյան Հ., Մեյթիլսանյան Փ., *Հայոց լեզու, 7-րդ դասարան*, Երևան, 2011:
6. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., *Հայոց լեզու, Շարահյուսություն*, Երևան, 2009:
7. Սահակյան Վ.Ա., Սահակյան Վ.Վ., *Ժամանակակից հայոց լեզվի կենտադրություն*, Երևան, 2010:

Տեղեկություններ հեղինակի մասին

Ա.Վանյան – Ստեփանակերտի Խ.Աբովյանի անվ. հ. 1 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկիայի անդամ, ք.գ.դ. Լ. Հովհաննիսյանը: